ԼԻԼԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԽՆԴՐԱՅԻՆ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ըստ 50-60-ական թթ. հայ արձակի)

Ընդհանուր բնութագիրը: Խնդրային ստորադաս բաղադրիչով բարդ նախադասությունը բարդ ստորադասական նախադասության այն տեսակներից է, որը գործածական մեծ հաճախականություն ունի գեղարվեստական խոսքում: Մտնելով բարդ ստորադասական նախադասության քերականական կարգի մեջ, այն կրում է ստորադասական կապակցություններին հատուկ ձևաիմաստային այն ընդհանուր հատկանիշները, որոնք ապահովում են նրանում եղած բաղադրիչ-նախադասությունների շարահյուսական փոխկախվածությունը: Միաժամանակ, լինելով այդ համակարգի առանձին տեսակ, այն ունի քերականական այնպիսի հատկանիշներ, որոնք ապահովում են այդ տեսակին բնորոշ ստորադասական հարաբերությունները: 50-60-ական թվականների հայ արձակից վերցրած օրինակների քննությամբ փորձենք լուսաբանել դրանք:

Նախ հիշենք, որ ստորադասական է այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչ-նախադասություններն իրար նկատմամբ քերականորեն անհամազոր են և գտնվում են լրացում-լրացյալ հարաբերության մեջ: Իսկ երբ բաղադրիչ նախադասություններից մեկը մյուսին հարաբերվում է խնդրային ստորադասությամբ, արդեն այդ կառույցը կոչվում է խնդրային ստորադաս բաղադրիչով բարդ նախադասություն:

1. Այս նախադասությունները ևս, ինչպես ցանկացած բարդ ստորադասական կառույց, բնութագրվում են բաղադրիչների կապակցության հիերարխիայով գերադասի և ստորադասի հարաբերությամբ: Օրինակ[1] Որսորդի բնազդով նա կռահեց, *որ հեղեղն իջնում է դեպի իրենց կանգնած տեղը* /9,69/: [Թեպետ Մարգարիտը ոչինչ չէր հասկանում նրա կարդացածից,] զգում էր, *որ Շերանիկը նման չէ ոչ հորը...*/10,97/: Ասում են *գեղեցիկ սար է* /6,18/: [Նայում ես ու] հավատալդ չի գալիս... /11,45/: Կանայք անշուշտ կուզենային, որ *նրանց հետ խոսեիր սիրո, հիասթափության, նորից սիրո, նորից հիասթափության մասին* /15,516/: Չկարողանալով պարզել, *թե ինչու է ետ եկել*, կանգ առավ փակ դռների առջև /4,193/:

1 Այս թեմային առնչվող օրինակներում ներառել ենք նաև խնդրային ստորադաս բաղադրիչ այն նախադասությունները, որոնք առկա են բազմաբաղադրիչ բարդ ստորադասական և բազմաբաղադ նախադասությունների կազմում: Վերջիններիս առանձին քննությունը հանձնել ենք մեր աշխատանքի ծավալներից դուրս:

Բերված բոլոր օրինակներում կա նույն օրինաչափությունը, որը կարող ենք դիտարկել այդ նախադասություններից որևէ մեկի քննությամբ: «Որսորդի բնազդով նա կռահեց, որ հեղեղն իջնում է դեպի իրենց կանգնած տեղը» նախադասության մեջ հիմնական միտքն արտահայտում է «Որսորդի բնազդով նա կռահեց» բաղադրիչը: Այն կոչվում է **գերադաս** կամ **գլխավոր** նախադասություն: Իսկ երկրորդ բաղադրիչը ամբողջությամբ լրացնում է գերադասի բայական անդամին (կռահեց ինչի՞ մասին՝ «*որ հեղեղն իջնում է դեպի իրենց կանգնած տեղը*»): Այն կոչվում է **ստորադաս** կամ **երկրորդական** նախադասություն: Նույն օրինաչափությունը առկա է նաև մյուս ստորադասական նախադասություններում, որոնցում ընդգծված բաղադրիչ-նախադասությունները գերադաս են, շեղագիրները ստորադաս:

Խնդրային ստորադաս կամ երկրորդական նախադասությունը արդի լեզվաբանության մեջ հայտնի է նաև **խնդրային կախյալ նախադասություն** անվամբ: «Խնդրային կախյալ նախադասությունները վերառված կերպով նշում են մի գործողություն, իր, իրողություն, երևույթ, որոնք իրենց այս կամ այն գործառույթով մտնում են գերադաս բաղադրիչի բայական անդամի արտահայտած գործողության ծիրի մեջ»[2]:

2. Խնդրային կախյալ նախադասությունը լրացնում է գլխավորի՝ միայն բայով կամ բայական բաղադրիչով արտահայտված տարբեր անդամների: Խնդրային կախյալ նախադասության լրացյալ կարող է դառնալ գերադասի այն անդամը, որը ձևաբանորեն արտահայտված է բայով կամ բայական բաղադրիչով: Այսպես՝ վերևի օրինակների ընդգծված գերադաս նախադասություններում խնդրառու լրացյալներ են **կռահեց, զգում էր, ասում են, հավատալդ չի գալիս, կուզենային, չկարողանալով պարզել** անդամները, որոնք արտահայտված են բայերով կամ բայական հարադրություններով: Կախյալ նախադասություն-բաղադրիչները (*որ հեղեղն իջնում է դեպի իրենց կանգնած տեղը* և այլն) լրացումներ են: Վերջիններս, կատարելով խնդրի պաշտոն, խնդրառու բայերից կախված են այնպիսի ստորադասական հարաբերությամբ, որի արդյունքում տեսանելի են դառնում այդ բայերի գործողության հետ անմիջապես առնչվող օբյեկտները (գործողություն, երևույթ, առարկա և այլն):

Խնդրային կախյալ նախադասությունը մեծ մասամբ դառնում է գլխավորի պարզ կամ բաղադրյալ ստորոգյալի լրացում, սակայն հաճախ այն կարող է լրացնել նաև այլ անդամների, որոնք ձևաբանորեն արտահայտված են բայով կամ ունեն բայական բաղադրիչ: Օր.՝ Այնտեղ ես <u>տեսա</u>, *թե դահիճներն ինչպես են խոշտանգում մեր ընկերներին* /3,222/: Ուրեմն <u>մստա՞ի եք</u>, *որ մենք ճիշտ ճանապարհով ենք գնում* /11,175/: <u>Խելքս չի կտրում</u>, *թե այդ ծովայինները*

2 ՊԱՊՈՅԱՆ Ա., ԲԱՂԴԻՍԱՐՅԱՆ Խ. Ժամանակակից հայոց լեզվի շարադրություն, Եր., 2003, էջ 274:

կկարողանան որևէ բան անել /11,276/: [Մարգարիտը կուչ եկավ և] վերջապես հասկանալով, *թե ում մասին է խոսքը...* /10,156/: Իրոք, լավ զննելու դեպքում դժվար չէր նկատել, *որ փտողն ու կանաչը նույն արմատն ունեին* /13,13/:

Նշված կախյալ նախադասությունները բոլորն էլ խնդիր լրացումներ են, սակայն լրացնում են գլխավորի տարբեր անդամների, որոնք, անպայման բայ են կամ բայական բաղադրիչ: Այսպես՝ տեսա. դիմավոր բայ է, գլխավորի մեջ կատարում է ստորոգյալի պաշտոն: Վստա՞հ եք. ածականով և օժանդակ բայով արտահայտված բայական հարադրություն է, գլխավորի բաղադրյալ ստորոգյալն է: Խելքս չի կտրում. բայական դարձվածք է, անենթակա նախադասության ստորոգյալն է: Հասկանալով. դերբայ է, գլխավոր նախադասության ստորոգյալի համար ձևի պարագա լրացում է: Նկատել. դերբայ է, գլխավորի մեջ հանդես է գալիս որպես ենթակա:

3. **Խնդիր կախյալ նախադասության բաղադրիչները չունեն ո՛չ ձևային, ո՛չ իմաստային անկախություն:** Ցանկացած բարդ ստորադասական նախադասության ամփոփ միտքն ապահովվում է ողջ կառույցի ձևաիմաստային ամբողջականության և հնչերանգային ավարտվածության շնորհիվ: Նույնը վերաբերում է խնդրային կախյալ բաղադրիչով բարդ նախադասություններին:

Կախյալ նախադասությունների անունն արդեն հուշում է, որ դրանք զուրկ են ձևային և իմաստային անկախությունից: Այս հատկանիշը բնորոշ է ոչ միայն լեզվական ընդունված կանոնակարգով գործող բոլոր նման կառույցներին, այլև խոսակցական լեզվում գործածվող և լեզվական նորմայից շեղվող շատ կառույցների համար: Օրինակ Ագահին երևի *չէր սպասում*, որ իր գաղտնիքն այդպես կհայտնվի բոլորին /15,360/: Նազան աղջիկը *վախեցել էր*, թե հիվանդացել է վարպետը... /10,180/: [Լաո, բարկությունից հայհոյեցի, հայհոյեցի անգլերեն, իսկ] նա *խնդրեց* հայերեն հայհոյել /4,8/: [Ամբողջ գիշեր գնում ենք ու] *չգիտեմ* դեռ ինչքան ենք գնալու /13,26/:

Այս նախադասությունների ամբողջականությունն առաջին հերթին ապահովվում են գերադաս բաղադրիչները, և առանց վերջիններիս կունենանք քերականական իմաստից զուրկ այնպիսի կապակցություններ, ինչպիսիք են՝ «որ իր գաղտնիքն այդպես կհայտնվի բոլորին», «թե հիվանդացել է վարպետը», «հայերեն հայհոյել», «դեռ ինչքան ենք գնալու»:

Գերադաս նախադասության անկախությունը ևս ձևաիմաստային առումով հարաբերական է: Եթե դրա խնդրառու բայը ներգործական սեռի է և ակնկալվում է խնդիր կամ եթե գլխավորի կազմում կա կախյալ նախադասությանը փոխարինող հարաբերյալ, ապա այդ դեպքերում գլխավորը, առանց կախյալ նախադասության, ձևաիմաստային առումով կիսատ ու թերի կդառնա:

Օրինակ՝ Պեռճը նրա թավ ծայնից կռահում էր. որ նրա դիմագծերը պիտի լինեն չոր.../3,235/: Մարդը ուզում է աւն. ինչ ինքը չունի /11,36/: Ասես թե հենց սնգբից ենթադրում են. թե լինելու է նաև երկրորդը, երրորդը... /13,15/:

Բերված ստորադասական նախադասություններում ընդգծված գերադաս բաղադրիչներն ունեն ներգործական սեռի բայ-լրացյալներ, որոնց մեջ խնդրային պահանջն այնքան ուժգին է, որ խոչընդոտում է գերադասի անկախ գործածությանը. կռահում էր (ի՞նչ, ինչի՞ մասին), ուզում է (ի՞նչ, ու՞մ), ենթադրում են (ի՞նչ, ինչի՞ մասին): Բացի դրանից, 2-րդ նախադասության մեջ առկա է այն հարաբերյալը, որը ևս խանգարում է գերադասի որպես առանձին նախադասության ձևային անկախությանը: Սակայն, երբեմն գլխավոր բաղադրիչները ևս ունենում են քերականական թվացյալ անկախություն, քանի որ ավարտուն հնչերանգ ունենալու դեպքում կարող են գործածվել որպես առանձին նախադասություններ, սակայն, իմաստային դաշտում, եթե չեն էլ պահանջում, գոնե ենթադրում կամ ակնկալում են լրացում, իրենցում առկա այս կամ այն բայական անդամի գործողության հստակեցում, բացահայտում: Օրինակ՝ [Այո, բայց լավ է,] երբ հավատում ես. որ այդ բոլորի համար հատուցում կլինի /3,37/: Դժվար էր համոզել ծերունուն. որ նկարի միտքը շրջանակի մեջ չի վերջանում... /4,7/: [Աստված վկա,] ես ծայնից ճանաչեցի. որ նա է. այն տղամարդավարի աղջիկը /11,54/: Եվ ես համոզվեցի. որ գիշերը ճիշտ էի մտածել / 13,21/: Վախենում էր. որ ես կմեռնեմ, ինքը մենակ կմնա /5,113/:

Քիչ չեն նաև խնդիր կախյալ բաղադրիչով այնպիսի կառույցները, որոնց գերադաս անդամի խնդրառու բայը սեռի պահանջ չի դնում և նրա գործողության ծիրը սահմաններ չի շեշտում, հստակեցված չէ: Նման դեպքերում հատկապես կարևորվում է **հնչերանգային ավարտվածության** գործոնը:

Օրինակ՝ Գոնե ստիպված չէիր ամեն օր լսել հինայած մորուքով դերվիշի «Եա-Ալլահ»-ը և սրտատրոփ սպասել. թե ե՞րբ պիտի արվեստանոցի ճաքած առաստաղը թափվի գլխիդ /3,31/: Նկառի մասին մտածելու փոխարեն. նա անսպասելիորեն մտաբերեց մի կայանավորի պատմածը. թե ինչպես իրեն ավելի վատ էր զգում ազատության մեջ, քան բանտում.../4,10/: Հույս էլ չկա. թե որևէ բան կուտենք /11,106/: Քանի՞ տարի առաջ էր նա վերջին անգամ տեսել իր քաղաքի երեկոն, ո՞վ գիտե /13,5/:

Եթե փորձենք նշված գերադաս բաղադրիչները գործածել ստորադասից առանձին և դարձնել հնչերանգով ավարտուն, ապա կտեսնենք, որ չնայած ձևային տեսանկյունից դրանց անկախությունը կարծես ապահովվում է, սակայն իմաստային դաշտում մեծ կորուստներ են ի հայտ գալիս՝ կապված ստորադաս-լրացման բացակայության հետ: Մի բան է «Հույս էլ չկա», բոլորովին այլ բան՝ «Հույս էլ չկա, թե որևէ բան կուտենք»: Կամ վերջին կառույցը, ուր «ո՞վ

գիտե» արտահայտությունն առանձին վերցրած շատ ընդհանրական իմաստ ունի, այն ավելի շատ եղանակավորող գործառույթ է կատարում այն հիմնական մտքի համար, որը, ի հայտ է գալիս կախյալ նախադասության շարադրանքով:

4. Բարդ նախադասության մեջ գործող ստորադասական հարաբերությունը հիմնավորում է այն **պատճառահետևանքային կապը**, որ գոյություն ունի գերադաս և ստորադաս բաղադրիչների միջև: Ճիշտ է, ստորադասական կառույցում այս հատկանիշը ոչ միշտ է հստակ արտահայտվում. որոշ դեպքերում այն գրեթե բացակայում է: Օրինակ, գեղարվեստական խոսքում շատ են հանդիպում խոսակցական լեզվից քաղած այնպիսի կառույցներ, որոնց մեջ այդ կապը պահպանվում է որպես զուտ ձևային հատկանիշ: Նման կառույցներում երկրորդական նախադասությունը կարծես ունի իմաստային հիերարխիա: Օր. Հիմա *տեսնում եք՝* ես ինձ վաշտի հրամանատարի պես եմ պահում /11,260/: *Խնդրում եմ* որոշ տեղ ուղեկցեք ինձ /15,517/: *Ասում ես* կինը տուն չթողե՞ց /10,197/: Ինչպես տեսանելի է, ընդգծված ստորադաս բաղադրիչները թեև կրում են նախադասության հիմնական միտքը, սակայն, այնուամենայնիվ, դրանք առանձին վերցրած բոլորովին էլ չեն արտահայտի այն իրական իմաստը, ինչ կարտահայտեին գլխավորների հետ միասին:

5. **Կախյալ նախադասության մեջ լրացման կարգավիճակի առաջնահերթությունը զբաղեցնում է ստորոգյալը:** Խնդրային ստորադասությամբ կառույցում կախյալ բաղադրիչը թեև չունի առանձին հնչերանգային ավարտվածություն, բայց պահպանում է իր նախադասության հատկանիշը հաստատող ամենակարևոր քերականական կարգերից մեկը *ստորոգումը*, որն էլ առաջնահերթորեն ապահովում է այդ նախադասություն-բաղադրիչի գերադասին լրացում դառնալու կարգավիճակը: Օրինակ Ես տեսա, թե ինչպես սպանեցին եղբորս /3,222/: Ես միշտ համոզված եմ եղել, որ դուք մեծ ապագա ունեք /4,198/: Հողը վառվում է, և մենք հավատում ենք, որ հրկիզող շիշը իրոք հզոր զենք է /11,73/: Ես նույնիսկ համաձայն չեմ, թե դա կլինի նոր սեր /13,45/:

Եթե փորձենք նշված բարդ նախադասություններն այնպես համառոտել, որ դրանց ձևային հենքը պահպանվի, ապա կհամոզվենք, որ դրա համար նախ պետք է մնա գերադասի լրացյալը, ապա՝ ստորադասի **ստորոգյալը**. «տեսա, թե ինչպես սպանեցին» (տեսա... ինչպես սպանելը). համոզված եմ եղել, որ ապագա ունեք (համոզված եմ եղել [ձեր] ապագա ունենալու մեջ). հավատում ենք, որ հզոր զենք է (հավատում ենք հզոր զենք լինելուն). համաձայն չեմ, թե կլինի (համաձայն չեմ լինելուն): Այս փոխակերպումներն ապացուցում են, որ կախյալ նախադասության ստորոգյալն իր վրա է վերցնում լրացման քերականական կարգի հիմնական գործառույթը, իսկ մնացած անդամները, նույնիսկ ենթական, ստորոգյալի միջոցով են լրացնում գերադաս նախադասությանը:

Կապակցման ձևերը և միջոցները: Խնդրային ստորադասական նախադասության բաղադրիչները միմյանց հետ կապակցվում են ձևային և իմաստային այնպիսի եղանակներով, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են նաև բարդ ստորադասական նախադասությունների այլ տեսակներին:

Սրանցում ևս ստորադասական հարաբերությունն իրականանում է գերադաս և ստորադաս նախադասությունների միմյանց կապակցման 2 եղանակով՝ *սպասարկու բառերով* և *առանց սպասարկու բառերի*: Ըստ այդմ էլ դրանք լինում են ա) նշույթավոր կամ զոդվածական, բ) անշույթ կամ շարահարական:

1. Զոդվածական կամ նշույթավոր կառույցներ: Սրանք իրականանում են *ստորադասական շաղկապների* և *հարաբերականների* միջոցով:

Խնդիր կախյալ նախադասությունները գլխավորին միացնող ստորադասական շաղկապներն են՝ *որ, թե*: Օրինակ՝ Լեյտենանտը չի թողնում, որ Կոնկինը խոսքն ավարտի /11,5/: Աղջիկը ձևացրեց, թե չի լսում /4,57/: Ասես թե հենց սկզբից ենթադրում են, թե լինելու է նաև երկրորդը, երրորդը... /13,15/:

Բերված օրինակներից տեսանելի է, որ շաղկապները նախադասության անդամ չեն և զուտ կապակցական դեր են խաղում: Դրանք երկուսն էլ կապակցել են խնդրային կախյալ բաղադրիչների տարբեր տեսակներ (երկուսը՝ ուղիղ, երկուսը՝ անուղղակի): Նշված շաղկապները սովորաբար գերադաս նախադասության խնդրառու բայի իմաստային պահանջով ձեռք են բերում կիրառման հարաբերական կայունություն, սակայն երբեմն կարող են փոխարինել մեկը մյուսին՝ ոճական երանգավորում հաղորդելով նախադասությանը և չխաթարելով ստորադասական հարաբերությունը: Օրինակ *Ասում են*, որ Հայոց լեռնաշխարհում այս տարի էլ գազազած մի գետի վրա քարե կամուրջ են կապում /10,187/: Երբ Կամալովն *ասում է*, թե նամակ չկա, նկատի ունի միայն իրեն... /11,31/: Ես *ենթադրում եմ*, որ անցյալի մեր մանրանկարիչները իրենց արվեստը կերտելիս թերևս օգտվել են այս քարերի նախշերից /14,56 /: Նշված օրինակներում *ասել* և *ենթադրել* խնդրառու բայերին լրացնող խնդիր կախյալ նախադասությունները մերթ կապակցվել են *որ* շաղկապով, մերթ *թե*: Եթե փորձենք դրանք փոխարինել մեկը մյուսով, ապա իմաստային մեծ փոփոխություն չի առաջանա: Սակայն նույնը չի կարելի ասել բոլոր կառույցների համար: Օրինակ՝ [...տեսնելով, որ տատիս տարան Օհանջանի տուն, վազեցի այնտեղ /7,11/: Հարցնում էին, թե ե՞րբ կհավաքվենք մի տեղ, մի հարկի տակ /2,59/: Նմանատիպ կառույցներում որ և թե շաղկապներն ունեն գործածական կայունություն, դրանք իրարով փոխարինելու փորձը կառաջացնի անհարթություն և ձևի, և իմաստի մեջ կամ, այլ կերպ ասած, կբերի լեզվական նորմայից շեղման: Նման կայունությունը կախված է մի շարք գործոններից, որոնցից են բայիմաստը, բայի եղանակաժամանակային քերականական

կարգը, նախադասության հնչերանգային տեսակը, կապակցական այլ բառերի առկայությունը, ոճական երանգավորումը և այլն:

Խնդիր կախյալ նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են նաև հարաբերականներով: Դրանք կարող են հանդես գալ թե կախյալ նախադասության կազմում որպես հարաբերական (ով, ով, ով որ, որոնք, ում, ում որ, ումից, ինչ, ինչը, ինչին, ինչ որ, երբ և այլն), թե գերադաս նախադասության մեջ որպես հարաբերյալ (այն, այս, բոլորը, այն բոլորը, ամեն բան, նրան, նրանց, նրանից, նույնը, այն ամենը, ամեն ինչ, մի բան, ամեն բան, ամեն մեկին, ամենը և այլն). երկու դեպքում էլ կարող են դառնալ նախադասության անդամ, կարող են գործածվել նաև եղանակավորման կամ ոճավորման նպատակներով:

Հարաբերականները կապակցման ժամանակ կարող են ունենալ նաև *որ* թարմատար. Օրինակ 1. Նրանք պետք է անեն այն, *ինչ* ես եմ անում /11,129/:

Օրինակ 2. Նրանք պետք է անեն այն, *ինչ* **որ** ես եմ անում:

Նշված երկու կապակցություններն էլ արտահայտում են ստորադասական նույն հարաբերությունը և իմաստով նույնն են: Սա վկայում է, որ *որ* թարմատարն ավելի շատ ձևային բնույթ ունի և էական դեր չի խաղում կապակցման մեջ: Շաղկապական և հարաբերական կապակցություններով խնդրային կախյալ նախադասությունները երկուսն էլ մտնում են զոդվածական կառույցների մեջ և դրանով իսկ ունեն ընդհանրություններ: Սակայն դրանց միջև առկա են նաև *տարբերություններ*.

ա/ Եթե շաղկապները (*որ, թե*), որպես լոկ քերականական հարաբերություն ստեղծողներ, **ունեն վերացական իմաստ** և, ինչպես համոզվեցինք վերևում, **հաճախ կարող են փոխարինել միմյանց** խոսքի մեջ իմաստային շեղում չառաջացնելով, ապա **հարաբերականները**, լինելով դերանուններ, ունեն նյութական իմաստ և իրենց **խոսքամասային** արժեքը **պահպանում են նաև որպես կապական բառ գործածվելիս**:

բ/ Եթե շաղկապները գործածվում են սոսկ որպես կապակցման միջոցներ և **նախադասության անդամ չեն դառնում**, ապա հարաբերականները, իրենց նյութական բովանդակությունն ստանալով գլխավոր նախադասության համապատասխան լրացյալներից, **հանդես են գալիս և՛ որպես կապակցման միջոցներ, և՛ որպես նախադասության անդամներ**:

Օրինակ ես տեսա *նրանց*, որ ընկան /3,226/: Իմ կյանքը կարծես կախված է *այն բանից*, թե ինչ է մտածում Պերեվերզևը /11,285/: Լևոնը զգում էր, որ Քնարիկին կարող է պատմել *այն բոլորը, ինչ* տեսել ու զգացել է պատերազմի դաշտում... /4,145/: Բերված նախադասություններում գործածված հարաբերականները (նրանց, այն բանից, այն բոլորը, ինչ), խնդիր ստորադասական կառույցի կապակցման միջոց լինելով հանդերձ, ոչ միայն պահպանել են իրենց խոսքամասային արժույթը, այլև դարձել են նախադասության անդամներ թե

գերադասի, թե՝ ստորադասի կազմում (*նրանց, այն բոլորը, ինչ* – ուղիղ խնդիր. *այն բանից, այն բոլորը* - անուղղակի խնդիր):

Շաղկապներն ու հարաբերականները, ըստ զոդվածական կառույցներում ունեցած իրենց գործառույթի, կոչվում են **նշույթներ** (կամ **զոդեր**): Դրանք լինում են **մենադիր** և **զուգադիր**:

Մենադիրները կցվում են միայն ստորադաս նախադասությանը: Այդպիսի նշույթներ են՝ **որ, թե, ինչ որ, ում որ, որ(ը), ով, ով որ, ովքեր, ինչ(ը), ինչեր** և այլն: Սրանցից միայն **որ** և **թե** շաղկապ-նշույթներն են, որ մենադրի հատկանիշով համապատասխանում են հայերենի լեզվական -կանոնակարգին: Օրինակ Նա ինձ խոսք էր տվել, **որ** զգոն կլինի /12,196/: ... կեչիները չնկատեցին, **թե** նա երբ ծերացավ... /5,128/:

Ստորադասական նախադասությունը կապակցող մենադիր նշույթների շարքում են դասվում նաև **իբր, իբր թե, որպես թե** շաղկապական բառերը[3]. Օրինակ 1. Նրանք ասում էին, **իբր** ժառանգական հատկությունները չեն փոխվում /1,73/: Եթե փորձենք փոքր-ինչ փոփոխել այս նախադասության շարադասությունը և «լրացնել» *որ* կամ *թե* շաղկապներով, ապա կստացվի հետևյալ տարբերակը. Օրինակ 2. Նրանք ասում էին, որ (*կամ* **թե**) ժառանգական հատկությունները **իբր** չեն փոխվում:

Ակներև է, որ 1-ին նախադասությունը 2-րդի ավելի հակիրճ՝ *որ* կամ *թե* շաղկապի զեղչված կառույցով տարբերակն է կամ, մեր կարծիքով, շարահարական կառույց է, ուր **իբր** շաղկապն ավելի շատ ունի եղանակավորող գործառույթ, քան կապական: Նույնը կարելի է ասել նաև **իբր թե** և **որպես թե** շաղկապների մասին: Մնացած նշույթները, որոնք հարաբերականներ են, ըստ լեզվական նորմայի, սովորաբար գործածվում են որպես զուգադիրի մաս, այսինքն գլխավոր բաղադրիչում ունենում են համապատասխան հարաբերյալ, սակայն, խոսակցական լեզվի հակիրճության միտումով երբեմն «կորցնում են» իրենց զույգը և դառնում մենադիր: Օրինակ՝ Հավատում է՝ **ում** պատահի: Նկարում է **ինչ** տեսնում է: Զարդում է, **ինչին** կպչում է: Կընտրես՝ **որը** պատահի: Խոսում է՝ **ինչից** գաղափար չունի: Տաքացնում է տունը՝ **ինչով** կարողանում է:

Եթե փորձենք լեզվական կոդավորմամբ չափակարգել վերևի նախադասությունները կամ, այլ կերպ ասած, վերականգնել զեղչված անդամները, ապա կստանանք հետևյալ պատկերը. «Հավատում է [նրան], **ում** պատահի: Նկարում է [այն], **ինչ** տեսնում է: Զարդում է **[այն ամենը], ինչին** կպչում է: Կընտրես [այն], որը պատահի: Խոսում է **[այն բանից]**, ինչից գաղափար չունի: Տաքացնում է տունը **[այն ամենով]**, **ինչով** կարողանում է»:

---

[3] Տես՝ Պառնասյան Ն. Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում: Ե., 1961, էջ 84:

Գեղարվեստական խոսքում հանդիպում են նաև այնպիսի մենադիրներ (**որպեսզի, երբ**), որոնց կիրառությունը որպես խնդիր ստորադասական նախադասության կապակցման միջոց, լեզվական նորմայից շեղում է և գալիս է խոսակցական լեզվում տեղ գտած սխալ կառույցներից: Հաճախ, նման շեղումները կապ չունեն կերպարային լեզվի կոլորիտի կամ ոճավորման հետ, այլ, որպես տարածված լեզվական սխալներ, ազդեցություն են ունենում նաև գրողի լեզվամտածողության վրա: Օրինակ՝ Մի՞թե ցանկանում եք, **որպեսզի** ձեր աչքերը այսօրվա պես միշտ լցված լինեն արցունքով /15,532/: Ավետը սիրում էր, երբ մարդիկ հետաքրքրվում էին իրենով /9,71/:

Այս շաղկապները, որոնք, ըստ լեզվական նորմայի, պետք է կապակցեն պարագա ստորադասական կառույցները, այստեղ անհարկի են կիրառվել և ստեղծել են սխալ կառույցներ: *Զուգադիր* նշույթները բաշխվում են նախադասության գերադաս և ստորադաս բաղադրիչների միջև. գերադասի սկզբում դրվում է նշույթի երկրորդ եզրը, ստորադասի սկզբում նշույթի առաջին եզրը: Այդ նշույթներից են այն... ինչ, այն... ինչ որ, այն... որ, այն բոլորը... ինչ, նրան(ից)(ով)... ում(ից)(ով), նրան(ց)... ով (որ), նրանց վրա... ովքեր, այն բանով... որ, նրան... որին, նրանից (նրանցից)... ով (ովքեր, որոնք), ոչ թե... այլ, ոչ միայն... այլ, նրանցից... ովքեր, նրանով... որ, նրա կողմից... ում, այն մասին... թե (որ) և այլն: Օրինակ Եթե մի այսպիսի հզոր փոթորիկ կարողանար արմատախիլ անել <u>այն, ինչ</u> թողեց նա իմ հոգում, եթե մարդու սիրտը մեծ լիներ այնպես, ինչպես այս տայգան, նա կարողանար բացել հողմերի առաջ, որ նրանք տանեին <u>այն ամենը, ինչ</u> տանջում է մարդուն /5,71/: Ես տեսա <u>նրանց, որ</u> ընկան /3,226/: Վայ <u>նրան, ով</u> ընկնում է Թալանի ճանկը /9,15/:

2. **Շարահարական կամ անշույթ կառույցներ**: Սրանք բարդ նախադասության այն տեսակներն են, որոնց բաղադրիչները կապակցվում են առանց սպասարկու բառերի: Շարահարական կառույցները, ըստ լեզվաբանների, ունեն վաղնջական ծագում և պահպանվելով խոսակցական լեզվում, լայնորեն կիրառվում են նաև գեղարվեստական խոսքում: Դրանք գործածման մեծ հաճախականություն ունեն նաև խնդրային ստորադասական կառույցներում, որոնց մեջ ստորադասությունն ավելի շատ ընկալվում է *հնչերանգով, իմաստով* կամ բաղադրիչների *բայ-ստորոգյալների եղանակաժամանակային կարգով*.

Ստորադասական հարաբերության **հնչերանգային** տարբերակումը կատարվում է նախադասության արտաբերման ձայնային երևույթների միջոցով: Շարահարական կառույցում այդ երևույթների բարձրակետը համապատասխանում է կառույցի բաղադրիչների միացման կետին: Սակայն, եթե բանավոր խոսքում հստակ է հնչերանգային տարբերակումը, ապա նույնը չի կարելի ասել գրավոր խոսքի մասին: Այստեղ ստորադասությունն ընկալվում է ավելի շատ **կետադրման** գործառույթի միջոցով, որը և ծառայում է կառույցի իմաստային

հստակեցմանը: Սակայն, միշտ չէ, որ կետադրության կիրառումը նպատակամետ է և լիարժեքորեն է կատարում հնչերանգը հստակեցնող իր գործառույթը: Այն երբեմն շեղվում է արդի հայերենում ընդունված կանոնակարգից: Հարցական (՞), տրոհման(,) և բացահայտման(՝) նշանները ոչ միշտ են գործածվում ըստ ուղղագրական պահանջների: Այդ շեղումների մի մասը կարելի է դիտել որպես ոճավորման նպատակով արված հնչերանգային հնարանք, մի մասն էլ՝ պարզապես սրբագրական վրիպում: Օրինակ՝ Գրում եմ ես ու չգիտեմ[՝] հավատա[՞]մ իմ գրածին, թե[՞] չհավատամ /11,33/: Տեսնու՞մ ես[՝] ինչպես մեծացել է Էիլիկը, է՞խ, չարաճճի /3,7/: Խնդրում է[՝] թույլ տամ, որ գա ինձ մոտ... /4,9/: Ես չգիտեմ[՝] ի՞նչ արեցի /5,45/: Նման դեպքերում ստորադասական հարաբերության **իմաստային ընկալման** մեջ էական դեր ունի բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների **եղանակաժամանակային քերականական կարգը**: Օրինակ՝ **Խնդրում է թույլ տամ**[, որ գա ինձ մոտ]... /4,9/: **Գիտեի**, նրան **առաջարկել էին** սպանել ինձ... /5,74/: Այս կառույցներից առաջինում բացակայում է կետադրությունը, երկրորդում՝ բութի փոխարեն գործածվել է ստորակետ: Երկու դեպքում էլ թուլանում է հնչերանգային կողմնորոշումը. առաջինի մեջ (Խնդրում է թույլ տամ) պահպանված չէ բարդ նախադասության բաղադրիչների տրոհման կանոնակարգը, երկրորդում (Գիտեի, նրան առաջարկել էին...) կարող է շփոթ առաջանալ համադասական և ստորադասական հարաբերությունների տարբերակման հարցում: Չնայած դրանց, ընդգծված բայերի եղանակաժամանակային համադրությունները օգնում են կողմնորոշվելու՝ ճիշտ ընկալելու շարահարական այդ կառույցներում առկա խնդրային ստորադասությունը: Համոզվելու համար բավական է փոխել բաղադրիչների բայերի եղանակաժամանակային պատկերը: Օրինակ՝ եթե «Խնդրում է թույլ տամ» կառույցում «խնդրում է» բաղադրիչը գերադասն է, իսկ «թույլ տամ»-ը՝ ուղիղ խնդիր կախյալ նախադասություն, ապա «Խնդրում է թույլ եմ տալիս» տարբերակում փոխվում են ոչ միայն բաղադրիչների դերերը, այլև պաշտոնները «թույլ եմ տալիս» բաղադրիչը դառնում է գերադաս, «խնդրում է» բաղադրիչը կախյալ նախադասություն, որ կարող է ընկալվել և՝ որպես պայմանի (եթե խնդրում է), և՝ որպես հետևանքի (քանի որ խնդրում է) պարագա: Կախված հնչերանգից, վերջինս կարող է ընկալվել նաև որպես բարդ համադասական նախադասություն: Շարահարական կառույցները, լինելով ժողովրդախոսակացական լեզվի ծնունդ, բնականություն են հաղորդում գեղարվեստական խոսքին, հստակեցնում կերպարային ուրվագիծը: Խնդրային ստորադասությամբ բարդ կառույցներում գործում են նաև **կապակցման օժանդակ միջոցներ՝** հարաբերյալը, ընդհանուր անդամով միավորվելը, խոսքի մասերի միմյանցով փոխարինվելը, շարադասությունը և այլն: